ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆ-ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՏՊԱՐԱՆԸ*

Ռ

Քրիստոնեությունը Հայաստան մուտք գործելուց հետո, հայի միտքը լուսավորողը, հայության մեջ գրագիտություն տարածողը և խավարի մեջ լուսատու ճրագ հանդիսացողը վանքերն են եղել իրենց վանականներով ու վանական դպրոցներով: Հայ ժողովրդի թե՛ կաթողիկոսներն ու առաջնորդները, թե՛ պատմագիրներն ու վարդապետները, վանքերում սնված ու մեծացած հոգևորականներ են եղել և կամ թե նույն այդ վանական դպրոցներում իրենց կրթությունն ստացած աշխարհական անձինք: Դարերից ի վեր վանքերը միմի դպրոց են եղել, որոնք մրցել են միմյանց հետ իրենց մեջ ծաղկեցրած գիտություններով ու արվեստներով:

Սակայն մեր ազգի պատմության վրա մի ակնարկ ձգելը բավական է, հասկանալու համար, թե քաղաքական իշխանությունը կորցնելուց հետո ԺԴ դարից սկսած, բռնությունն ու սրածությունը ինչպիսի ավեր են գործել Հայաստանում և ժողովուրդը մոնղոլական հրոսակների ձեռքից ինչպիսի նեղություններ ու տանջանքներ է քաշել: Բարգավաճ քաղաքների հետ հետզհետե ավերվում և ամայանում էին նաև գրագիտություն տարածող վանքերը: Բռնության երեսից վանականները թողնում էին վանքերը և ապաստանում այլ տեղ, վանքերի ունեցած-չունեցածը, գույքը, սրուանց հետ և ձեռագրերը, հափշտակվում և անհետ կորստյան էին մատնվում:

Վանքերի ավերվելովը՝ պակասում էին բնականաբար ձեռագիր սատյաններ պատրաստող ձեռքերը, իսկ ձեռագիրներն էլ, մյուս կողմից ժամանակի ընթացքում հնանում էին ու մաշվում: Ձեռագիրներն արտագրողներն էլ տեսնելով, որ իրենց աշխատանքը չի վարձատրվում ինչպես որ պետքն է, հոգեպես թուլանում էին և դրանց թիվն էլ հետզհետե պակասում էր, իսկ այդ տեսակ արվեստագետների պակասելովը՝ ձեռագիրների արժեքն էլ բարձրանում և ժողովրդի համար անմատչելի էր դառնում: Չնայած այդ ծանր պայմաններին, եկեղեցիների բարեզարդության և աստվածային պաշտամունքի անթերի կատարման համար թե՛ եկեղեցական և թե՛ վարդապետական գրքերի կարևորությունը շատ մեծ է եղել, ուստի աստվածային պաշտամունքը յուր բարձրության և վեհության վերա պահելը դառնում է մի գլխավոր անհրաժեշտություն տպագրական արվեստի տպագրության և տարածման համար: Ինչպես որ Գյուտենբերգի միակ ցանկությունն էր, որքան կարելի է արագ կերպով տարածել Աստուծո խոսքը ժողովրդի մեջ, այնպես էլ նույն այդ գաղափարն է գերակշռում նաև հայերի մեջ և ժողովրդի համար առաջին անգամ տպագրվում են Սաղմոսն ու Տոմարը: Հասկանալի է, թե ինչո՞ւ Էջմիածնի կաթողիկոսների աչքից չի վրիպում Եվրոպայում սկսված ու արագությամբ ընդարձակ ծավալ ստացող տպագրությունը:

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1972 թվականի № Դ-ից:

Էջեր Ագաթանգեղոսի առաջին տպագրությունից (1709 թ., Կ. Պոլիս)

Գ.

Տպագրության արվեստի մասին հայ կաթողիկոսները առաջին տեղեկությունները ստանում են առևտրական գործերով Եվրոպայի զանազան քաղաքներում բնակություն հաստատած հայ վաճառականների միջոցով:

Քաղաքական իշխանությունը կորցնելուց հետո հայը սկսել էր Եվրոպա գաղթել: Այդ գաղթն ավելի ընդարձակ ծավալ է ստանում երկրի անապահով դրության պատճառով: ԺԱ դարից սկսվում են սելջուկների արշավանքները Հայաստան, որոնց հետևում են մոնղոլ և թաթար ցեղերի ասպատակությունները:

Այսպիսի ծանր վիճակից ազատվելու համար հայը թողել էր տուն ու տեղ և հեռանալով հայրենիքից՝ պանդխտության է դիմել, բայց յուր սիրտն ու հոգին մայրենի հողից չի կտրել, նրա ուշքն ու միտքը միշտ էլ դեպի հայրենիքն

է եղել ուղղված։ Հայը աշխատել է օտար երկրից անգամ ծառայել ու օգտակար լինել յուր հայրենիքին։ Պարզ է, որ Եվրոպայի քաղաքներում յուր մասնավոր գործերով շրջող սրտացավ հայը, տեսնելով տպագրական արվեստի առաջ բերած լուսավորությունն ու առաջադիմությունը իբրև ճշմարիտ զավակ չարատանջ հայ ժողովրդի, պետք է աշխատեր նույն լուսավորության սյուները մայրենի երկիր տեղափոխել։

Ահա թե ինչն է պատճառը, որ Եվրոպայի զանազան քաղաքներում բնակություն հաստատած հայի աչքից վրիպել չէր կարող տպագրության գյուտի արվեստը, որի մասին և անմիջապես հաղորդում են ժամանակակից կաթողիկոսներին։

Հայ հոգևորականության համար կյանքի խնդիր է դառնում ըստ կարելվույն օգտվել տպագրության գյուտից և ծառայեցնել այն հոգևոր ժողովրդի։ Որչափ էլ որ այդ արվեստը յուր տված արդյունքով հրապուրիչ էր ու ցանկալի հայ կաթողիկոսների համար, նույնչափ էլ նրանց համար առայժմ մայրենի հողի վերա այդ արվեստը հաստատելու անհնարավորությունը ըմբռնելի էր։ Եթե աչքի առաջ ունենաք, թե որչափ դժվար է նույնիսկ այժմ տպարան հիմնելը և պահելը, դորա անհնարավորությունը հասկանալի կդառնա այն ժամանակի համար, երբ արվեստն անկատար էր, ամեն նյութ թանկ էր ու բազմաթիվ խոչընդոտներ կային տպարան բաց անելու համար։ Հարկավոր էին կարող, ձեռներեց, ճարտար, հանճարեղ ու տոկուն անձինք, որոնց միջոցով կարելի լիներ Եվրոպայում տպարան բաց անել և գյուտի արդյունքը հայրենիքին ընծայել, մինչև որ հայրենիքում իրերի դրությունը կփոխվեր և տպարան հաստատելը այնտեղ հնարավոր կդառնար*։

Տպագրության արվեստը Գերմանիայից անմիջապես տարածվում է շրջակա երկրների մեջ և ամենից առաջ հաստատվում է Վենետիկում։ Վերջինս արևելքի և արևմուտքի համար Միջերկրական ծովի ամենանշանավոր առևտրական կենտրոններից մեկն էր։ Ուստի և յուր դիրքի և քաղաքականապես խաղաղ կյանքի շնորհիվ ավելի շփում ուներ բոլոր երկրների և ազգերի հետ։ Այդ է պատճառը, որ ամենից շուտ Վենետիկում ծաղկեց տպագրության արվեստը։ Տպագրության գյուտից սկսած մինչև ԺԵ դարի վերջը Վենետիկում այնքան էին բազմացել տպագրիչները, որ նրանց թիվը բավական շատ էր, նրանց մեջ եվրոպական բոլոր ազգերն էլ իրենց ներկայացուցիչներն ունեին։

Այդ պատճառով, երբ վանական հայն էլ է կամենում տպագրությամբ յուր ազգին ծառայություն մատուցանել, նա էլ է գերադասում Վենետիկ դիմելը, բան մի ուրիշ տեղ։

---

* Աղեքսանդր Երիցյանը յուր՝ «Պատմական տեսություն հայ տպագրության» աշխատության մեջ այդ առթիվ հետևյալ խորհրդածություններն է անում. «Տպագրության գյուտը որքան մեծ է և օգտավետ, այնուամենայնիվ եվրոպական ազգությանց շատերի մեջ մուտ գործելիս մեծ հալածման և ընդդիմության է հանդիպած, մանավանդ հոգևորականության կողմից։ Մեր մեջ, ինչպես հետո կտեսնենք, բոլորովին հակառակն է եղած։ Դեռևս ԺԶ դարում հայ տպագրության առաջին փորձերը Եվրոպայում մեծ համակրություն են գտնում Էջմիածնա հոգևորականությունից։ Կաթողիկոսները, որոնք այդ միջոցներում թշվառության մեջ էին, հանդերձ յուրյանց Աթոռով և Արարատյան աշխարհով, զարմանալի եռանդ են ցույց տալիս հայ տպագրությունը հառաջ մղելու համար և անդադար վարդապետներ են ուղարկում հեռավոր և յուրյանց անծանոթ Եվրոպան նոր տառեր ձուլելու, նոր տպարաններ հաստատելու համար և այդպիսով մի փառավոր տեղ է բռնում Էջմիածինը հայ տպագրության պատմության մեջ։ (Ընդգծումները մերն են. Տես Աղ. Երիցյան, Պատմական տեսություն հայ տպագրության մինչև ԺԹ դարը, Տփխիս, էջ 1)։

Ներսես Շնորհալի. «Յիսուս Որդի» (1660 թ., Ամստերդամ)

Դ

Մինչև ԺԹ դարի կեսը բոլոր բանասերների ընդհանուր կարծիքն այն է եղել, որ ԺԶ դարում Միքայել կաթողիկոսի դեսպանությամբ Եվրոպա գնացած Եվդոկիացի Աբգարն է եղել առաջինը, որ 1565 թվին տպագրությունը մտցրել է հայոց մեջ: Դորան վկա էին բերում Աբգարի ձեռքով Վենետիկում տպագրված **Սաղմոսը**: Սակայն ԺԹ դարի վերջին քառորդին կատարված հետազոտություններն ու նորանոր գյուտերը փոխել են տալիս այդ կարծիքը և հայկական տպագրության ժամանակը հասցնում են 1512 թվականը: Այս և հաջորդ 1513 թվից մնացել են հինգ հատ գրքեր կրոնական բովանդակությամբ: Այս գրքերի տպագրողն է Հակոբ անունով մեկը, որ իրեն «Մեղապարտ» է կոչում: Գրքերը տպված են Վենետիկում:

Աչքի առաջ ունենալով այն ժամանակ տպարան հիմնելու դժվար պայմանները և կաթոլիկության հարուցած հալածանքները օտարազգիների դեմ, դժվար է ընդունել, որ հենց առաջին անգամ հայ տպարան է գոյություն ունեցել հայ տպարանատերով: Ուստի և առաջին գրքերը տպվել են օտարազգի տպարաններում:

Հայերեն գրքի առաջին տպագրությունից հետո անցնում է 50 տարի, մինչև որ հանդես է գալիս Աբգարը, որից հետո էլ տպագրությունը շարունակվում է ընդհատումներով բավական ժամանակ: Այստեղ պետք է շեշտել հայ առաջին տպագրիչների ցուցադրած եռանդը: Տպագրական գործի հետ կապված այն ժամանակվա բոլոր արգելքերի հանգամանքներն աչքի առաջ ունենալով, մարդու զարմանք է պատում, երբ կարդում ենք Աբգարի, Հովհաննես Տերզնցու, Հովհաննես Անկյուրացու, Մատթեոս Ծարեցու, Կարապետ Ադրիանացու, Ոսկան վարդապետի և այլ անձանց պատմությունները, նրանց եռանդուն գործունեության մասին: Նրանք մեծ հոգու տեր անձինք լինելով՝

կանգ չէին առնում ոչ մի նյութական զոհաբերության առաջ, իրենց նպատակին հասնելու համար: Եվ այսօր մարդկանց զարմացնել կարող են նրանց ջանքերի շնորհիվ եղած տպագրությունները, որոնք արվեստի ճաշակի ու գեղեցկության կողմից իրենց ժամանակվա համար կատարելություն են ներկայացնում: Նոցա գործունեության գունավոր նկարագրություններ գտնվում են իրենց ձեռքով տպած գրքերի հիշատակարաններում:

Կարապետ վարդապետ Ադրիանացին՝ 1661 թվին Ամստերդամում, յուր տպագրած Սաղմոսի հիշատակարանում գրում է. «...Ցիշեսջիք ...նախ զԾաթեցի Մատթէոս սարկաւագն, որ հանգուցեալ է առ Աստուած, որ էր նուռար Փիլիպպոսի ճգնազգեաց կաթուղիկոսի ...**որ բազում ջանիւք և երկամբք քանդակել ետ և նորակերտեաց զազնիւ և զպատուական գիրս...**»*:

Թովմա եպիսկոպոս Վանանդեցին 1696 թվին Ամստերդամում տպագրած Թովմա Քեմփացու «Ցաղագս համահետևմանն Քրիստոսի» գրքի հիշատակարանում ասում է. «Ուստի ես **հէքս և ողբոց** բազմաց ստորակայեալս, **անճաշակ և անհպաւոր այնքանեաց բազմունակ և ամենալի երախանաց և արտաքսեալ յերամաց, և ի դասուց որդւոց առագաստի՝** Թովմաս եպիսկոպոս... զքաղցրանաշակ Գիրս Թովմասու Քեմփացւոյ տպագրել յիմում Գործարանում զոր յարմարեցի և կազմեցի վշտօք անթուելեօք: Այլև՝ ծախս նոցունց՝ յիմոց ընչից»[3] և այլն:

Փրկչական 1709 թվին Կ. Պոլսում տպված **Ագաթանգեղոսի** պատմության հիշատակարանում կարդում ենք. «...Իսկ ես յամենից նուաստ, վիրաւորեալս մեղօք Գրիգոր դպրիս... մեծաւ փափագանօք, երկամբք և տաժանելի աշխատանօք». և այլն:

1785 թվին Էջմիածնի տպարանում տպված **Ատենի ժամագրքի** հիշատակարանում գրված է. «...Զոր և ըստ յոգնաթախանձ խնդրոյ Քրիստոսասէր և բարեջան Զուղայեցի ի Տէր հանգուցեալ Պօղոսեան մահտեսի Խաչիկ աղային տպագրեցաք, նորակերտ գրովք, և տոկուն թղթովք, խորհրդաւոր պատկերօք և նրբաքանդակ խորանօք, կանոնօք և ծաղկմամբք: Որում գործաւորութեան թէպէտ և յոլով ձախորդութիւնք ընդդիմակայեալք յամեցուցին, այսինքն՝ պակասութիւն հարկաւոր պիտոյիցն ըստ ամին, զորս ի յաղքատ վայրոջս ոչ գտանելով, ի հետուստ դժուարութեամբ առձեռն բերեմք: Նաև խառնակութիւնք կողմանցս յանտիրութենէ, որք և զսուրբ Աթոռս և զմեզ խռովեն և անհանգիստ առնեն...» և այլն:

Վերոգրյալ մի քանի օրինակներից էլ ընթերցողը կտեսնի, որ հայ տպագրության անձնվեր առաջին այդ մշակները համեստության քողն երեսներին, իրենց տանջալից աշխատանքը աչքի առաջ ունենալով հանդերձ՝ իրենց անվանում են «անարհեստ», «անպիտան», «անիմաստ», «ապերախտ», «անճաշակ» և այլն:

Կաթոլիկ աշխարհի հալածանքների առաջ Էջմիածինը և հայ տպագրիչները թեև չվհատվեցին, բայց ստիպված եղան հայ տպագրությունը երբեմն Ամստերդամ, երբեմն Լիվոռնո, Մարսել, Փարիզ, Վենետիկ, Կ. Պոլիս և այլ բաղաքներ տեղափոխել: Հայրենիքին ծառայելու պատրաստ այդ անձինք համարյա բոլորն էլ մեծամեծ պարտքերի տակ ընկան: Բայց նրանց տոկուն ջանքերի շնորհիվ հայկական տպագրությունը չընդհատվեց, այլ շարունակաբար գործեց, մինչև որ ժամանակների ու հանգամանքների փոքր ի շատե

* Այս և ստորև բերված ընդգծումները մերն են: Ա. Ե. Ս.:

նպաստավոր դառնալովը մայրենի հողի վերա յուր համար նա հիմնավորելու հող գտավ։

Հայկական տպագրության ծաղկման ու զարգացման մասին հոգս են քաշում հետագայում առհասարակ հայոց կաթողիկոսները։ Նորա սկզբնական շրջանի պատմության մեջ մեծ դեր են խաղացել Միքայել կաթողիկոսը, Աբգար դպիրը, Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսը, Ոսկան Երևանցի վարդապետը, Կարապետ վարդապետ Ադրիանացին, Վանանդեցի եղբայրները և այլոք, որոնք Եվրոպայում Էջմիածնի անվամբ և օժանդակությամբ տպարաններ հիմնեցին ու պահեցին, իսկ վերջը մեծ դեր է խաղում Սիմեոն կաթողիկոսը՝ հենց Էջմիածնում տպարան հիմնելով։

Ե

Տասներեքից տասնվեցերորդ դարը հայոց պատմության մեջ ծանր ժամանակներից մեկն էր ներկայացնում օսմանցիների հանդես գալով և Կ. Պոլիսին տեր դառնալովը եվրոպական բոլոր պետությունները խիստ անհանգստության են ենթարկվում և օր ավուր սպասում էին սուլթան Բայազիտ Բ-ի Եվրոպա արշավելուն։ Սակայն տասնչորսերորդ դարի վերջերին Թեմուրլենգի երևալը արևելքում և դեպի Փոքր Ասիա առաջ խաղալը՝ հույս էր ներշնչում եվրոպական պետությանց, թե Թեմուրի հետ դաշն կապելով՝ կարող պիտի լինին Եվրոպային սպառնացող օսմանցիների արշավանքները ոչ միայն կանգնեցնել, այլև նրանց ոյժը իսպառ խորտակել։ Ուստի և այդ պետությունները աշխատում են օր առաջ դեսպաններ ուղարկել Թեմուրի մոտ և իրենց հպատակությունը ցույց տալ։

Թեմուրլենգը, որը մի անգամ Հայաստանի վերայով արշավել էր մինչև Անգորա, որտեղ 1402 թվին հաղթել էր օսմանցոց և Բայազիտ Ա-ին գերի վերցրել և Սամարղանդ վերադարձել, իրեն այնքան հզոր էր ընդունում ու ճանաչում, որ երբ Իսպանիայի թագավորի դեսպաններին 1403-ին ընդունում է Ռուլ Գոնցալեց Կլավիխոյի գլխավորությամբ, հարցնում է նորան՝ «Ինչպես է իմ որդին՝ ձեր թագավորը, առո՞ղջ է, նա» և ապա յուր մոտի ազնվականներին դառնալով՝ ասում է. «Տեսեք, այս դեսպաններին ուղարկել է իմ որդին՝ Սպանիայի թագավորը...»*։ Եվ Ասիայի հռչակավոր աշխարհակալը յուր «հայրական» օրհնությունն է ուղարկում նրան, իրեն հնազանդություն ցույց տալու համար։

Չնայած Թեմուրի այս հզորության, նրա դեմ ապստամբում է թաթարների խան Թոխթամիշը և արշավելով՝ գրավում Ատրպատականն ու Վերին Հայաստանը։ Բայց երբ լսում է, թե Թեմուրը իրեն դեմ է գալիս, խանը ետ է դառնում ու գնում Թաթարիստան՝ ավերելով գյուղեր ու ավաններ։

«Նա հասավ (Ատրպական) նահանգը, ասում է Կլավիխոն (1403—1406) և գրավեց Թավրիզը ու վերին Հայաստանի բոլոր շրջանները։ Շատ քաղաքներ կողոպտվեցին, շատ բերդեր ավերվեցին և իր բանակները քարուքանդ արին գյուղերը, ինչպես մենք դեսպաններս տեսանք այս մասերում ճանապարհորդելիս, մասնավորապես երբ մենք եկանք Սուրմարի քաղաքը։ Նույնը վիճակվեց նաև Սիսական շրջանի գլխավոր քաղաքին, ինչպես նաև Հայաստանի մյուս երկրներին»**։

---

* Հ. Հակոբյան, Ուղեգրություն, հատ. Ա, Երևան, 1932, էջ 70։
** Նույն տեղում, էջ 124, տես նաև անդ, 109, 110, 134, 135, 139։



Մի էջ «Հարանց վարք»-ից (1641 թ., Նոր Ջուղա)

Պարսկաստանից դեպի Էրզրում-Տրապիզոն, Կ. Պոլիս տանող ճանապարհի վերա միջին դարերում ամենահարուստ և բազմաժողովուրդ քաղաքը՝ իբրև առևտրական կենտրոն, Ջուլֆան էր, որ նկարագրում են մեծ հիացմունքով բոլոր Եվրոպայի ճանապարհորդները: Ջոն-Նիուբերի (1578—1581), որ եղել է այնտեղ, ասում է, թե Ջուլֆան ուներ 3000 տուն բնակիչ* (ըստ Ջոն Բուրթոայթի—2000 տուն): Սակայն այդ բոլոր հարստությունը ԺԷ դարի սկզբին ժողովրդի հետ միասին ոչնչանում է:

Կարծեք թե մի տեսակ՝ ավերածությանց մեջ մրցություն էր սկսված մի կողմից Եգիպտոսի սուլթանների**, մյուս կողմից էլ օսմանցիների և պարսից

* Հ. Հակոբյան, Ուղեգրություն, հատ. Ա, էջ 453, 460. ծան. 3:

** Ուղեգրութ., Ա հատ., էջ 64:

մեջ, որոնք աշխատում էին մեկը մյուսից ավելի ավերել ու քանդել՝ հակառակորդի ձեռքը ոչինչ չընկնելու համար։

«Թագավորի ուժը կայանում է նրանում,—ասում է Վինչեցո դ'Ալեքսանդրին՝ խոսելով օսմանցիների մասին,—որ նա երկիրը ավերակ է դարձրել թրքական սահմանի վերա՝ ամեն կողմ վեց օրվան ճանապարհ հեռավորությամբ և շրջանում քանդած է բոլոր ամրոցները, որպեսզի զորացնեն յուր դիրքը և թուրքերը հակում չունենան գրավելու և պահելու այն»*։

Մահմեդական իշխանապետների այս թատերաբեմը խեղճ Հայաստանն էր, որը հյուծվում էր ու քայքայվում հետզհետե։

Այդ ժամանակի Էջմիածնի կաթողիկոսը Ստեփաննոս Ե Սալմաստեցին էր, որ շատ զարգացած ու լեզվագետ մի մարդ էր։ Գիտեր նաև լատիներեն լեզուն։ Մայր երկրում տիրող բռնություններից խույս տալու համար նա իրեն օգնական կաթողիկոս է ձեռնադրում Միքայել Սեբաստացուն, ու ինքը Եվրոպա անցնում, քաղաքական որոշ նպատակ ունենալով։ Նա երկար մնում է Վենետիկում, Հռոմում, անցնում է Գերմանիա, Լեհաստան և վերադառնում հայրենիք։ Այդ շրջագայության ժամանակ, թեև յուր նպատակներին չի հասնում, բայց նորա ուշադրությունը գրավում է այն հեղափոխությունը, որ առաջ էր բերել Գյուտենբերգի գյուտը։ Եվ հայրենիք վերադառնալով՝ տպագրության մասին յուր տեսածն ու լսածը անպայման պատմում է Միքայել Սեբաստացուն, պարտք դնելով երևի նորա վրա, որ նա աշխատի հայոց մեջ ևս այդ հրաշալի արվեստը մտցնե ու ընդհանրացնե։

Միքայել կաթողիկոսն էլ կամենալով մի կերպ ազատվել Էջմիածնին շրջապատած թշվառություններից, նեղություններից ու ճնշումներից, իրեն աթոռակից ընտրելով Բարսեղ եպիսկոպոսին ու նորան հանձնելով Էջմիածնի կառավարությունը, 1562 թվին ինքն է անցնում հայրենիք՝ Սեբաստիա, մի քիչ ազատ շունչ քաշելու համար։ Ահա այստեղ նա ծանոթանում է եվդոկիացի (թոքատցի) Աբգար անունով մի մարդու հետ, որ «դպիր» պատվանունն էր կրում։ Աբգարը գրչագրության արվեստի մեջ յուր ճարպկությամբ շատ նշանավոր էր։ Ինչպես պատմում են, ոչ միայն տեսակ-տեսակ գրել գիտեր, այլև ծածկագրություններ էր հնարում, ձախ ձեռքով գրում էր այնպես՝ ինչպես աջով և այլն»**։

Աբգարի հետ ծանոթանալով՝ Միքայել կաթողիկոսի մեջ միտք է հղանում մի պատգամավորություն ուղարկելու Հռոմ, հայ ժողովրդի համար օգնություն խնդրելու։ Պատգամավորության գլուխն էր Աբգար դպիրը, որին միացել էր յուր որդին՝ Սուլթանշահը և Աղեքսանդր անունով մի քահանա։ Պատգամավորությունը յուր հետ տանում էր Միքայել կաթողիկոսի հատուկ գիրը Հռոմի Պապ Պիոս Դ-ին հանձնելու համար։ Այդ թղթի մեջ կաթողիկոսը ի միջի այլոց խնդրում էր Պապին սիրով ընդունել Աբգարին և Հռոմում ինչ որ տեսնելու արժանի արվեստների հրաշալիքներ կան, ցույց տալ նրան։

Պիոս Պապը հաճությամբ է ընդունում Աբգարին և հայոց եկեղեցուն ավելի մոտիկից ծանոթանալու համար հայոց եկեղեցու դավանությունն է խնդրում, որը և տալիս է Աբգարը։ Պապի և Աբգարի միջև տեղի ունեցած մի տարի տևող բանակցությունները ինչ հետևանք ունեցան՝ հայտնի չէ՝ սակայն Աբգարի Հռոմում մնալը ապարդյուն չի անցնում։ Նա օգտվում է հանգամանքից և յուր ուշադրությունն է դարձնում տպագրության գյուտի վերա։ Նորա ջանքերով 1565 թվին տպվում է հայերեն Սաղմոսը։

---

* Նույն տեղում, էջ 352։

** Աղեք. Երիցյան, Պատմական տեսություն հայ տպագրության, Տփխիս, էջ 3—4։

Այդ ժամանակ տպագրության իրավունքն ու վերահսկողությունը գտնվում էր կաթոլիկ հոգևորականության ձեռքում: Այդ պարզապես երևում է Աբգարի տպագրած Սաղմոսի հիշատակարանից: Սաղմոսի վերջը դրված է կարդինալների և մի եպիսկոպոսի պատկեր, որոնց մեջտեղը բազմած է Պիոս Դ Պապը եռակարգյան խոյը գլխին, Պետրոսի բանալիները ձախ ձեռքին, իսկ աջով օրհնում է հայ նոր գիրը, որ Աբգարը ծունկ չոքած ներկայացնում է Պապին:

Աբգարը տեսնելով, թե պապական կղերի ազդեցությունը որքան ճնշում է իրեն, մյուս կողմից էլ երևի լավ արվեստագետներ չգտնելով, Վենետիկի հասարակապետության պաշտպանությանն է դիմում, կամենալով այնտեղ առաջ տանել հայկական տպագրությունը: Նա ներկայանում է Վենետիկի դուքսին և խնդրում է հովանավորել իրեն և յուր տպագրությունը: Այդ երևում է Աբգարի տպագրած Սաղմոսի մեջ դրված երկրորդ պատկերից, ուր Աբգարը և յուր Սուլթանշահ որդին ներկայանում են Փրիալի Հերոնիմոս Դոժին, հրաման ստանալու Սաղմոսը տպելու համար: Գրքի վերջը հետևյալ հիշատակարանն է դրված.

«...կազմեցաւ սուրբ երգարանս Դաւթի լաւ և յընտիր աւրինակէ Գանեցոյ վարդապետի.... ի թուականիս հայոց ՌԺԷ (1566), մայիս ԺԷ (17) աւր, ուրբաթ ԺԲ (12) ժամի... առ ոտս Մելքիսեդէկ եպիսկոպոսին ի մայրաքաղաքն ի Վենետիկ, ընդ հովանեաւ սուրբ Մարկոս աւետարանչին ի Հայոց հոգեւորունն: Ի ժամանակ Սիմոնի ...Յիշեցէք ի մաքրափայլ աղաւթս ձեր զաշխատողքս սորայ զառաջինքն և զմիջինքն և զվերջինքն և Աստուած յիշէ զձեզ իւր միւս անկամ գալուստն... Ամէն ...ԲՃՀԲ (272) թուիստ է և ամէնն կոխած է, և իսկի գրչի գիր չկայի գիրքս բաւ է»—1565[1]:

Պապական կղերի հարուցած հալածանքների շնորհիվ Աբգարն անցնում է Կ. Պոլիս, որտեղ նա տպում է առաջին անգամ **Քերականութիւնը**, որի համար հետին տարիների Մաղաքիա Ժամանակագիրը այլաբանորեն ասում է.

«Ի Հայրապետութեան Հայոց Տէր Միքայէլի ԻԱ (21) ամի կաթողիկոսութեանն, ի մայրաքաղաքն Կոստանդնուպոլիս, յերկրորդ ամի թագաւորութեանն օսմանցւոց Սուլթան Սելիմի և չորրորդ ամի պատրիարգութեան Տէր Յակոբ Ռարունապետին Կոստանդնուպոլսեցւոյ, առ ոտս Յովհաննէս եպիսկոպոսին, ընդ հովանեաւ սուրբ Նիկողայոս եկեղեցւոյն Հայոց՝ եղև ստամփա, այսինքն պասմա գիր, և տպեցաւ փոքր Քերականութիւն (Այբբենարան) տղայոց ձեռամբ անարուեստ կնքագիր դպրի և մերս Յոթորին»:

Այստեղ Աբգարի անվան տեղ «կնքագիր դպիր» է հիշված, գուցե մեր այժմյան տպագիր ասածը այդպես կոչելով: Իսկ Հոթոր է ասած, որովհետև սա Մովսես մարգարեի աներոջ անունն է և ուզում է ասել, թե նորա պես Աբգարն էլ յուր ազգի գլխավորին ճանապարհ ցույց տվեց ազգը հեշտությամբ կառավարելու համար: Հետևյալ տարին տպված գրքի հիշատակարանում ավելի պարզ է ասված.

«ՌԺԷ (1568—69) ի Կոստանդնապոլիս Նոր ստամփա գիր սահմանեցին, ի հայրապետութեան Տեառն Միքայէլին Էջմիածնի և ի պատրիարքութեան Կոստանդնապոլսոյ Տէր Յակոբին, ընդ հովանեաւ սուրբ Նիկողայոս եկեղեցւոյն, ձեռամբ Խորվիրապցի Առաքեալ աբեղային, արհեստագործութեամբ Աբգար դպրին, և իւր թագազարմ Անտոնիոս Սուլթանշահ սարկաւագին, որոյ գրովքն տպեալ Տօնացոյցս յառաջ բերին»:

Բացի Տոնացույցից հիշվում է նաև, որ Աբգարը և յուր գործակիցը Կ.

Պոլսում տպել են 1568—69 թվականներին Տաղարան, Ժամագիրք, Պատարագամատույց և Մաշտոց»*:

Դորանից հետո այստեղ էլ կաթոլիկ հոգևորականությունը հալածանք է սկսում հավանականորեն Աբգարի դեմ: Գուցե և այդ է պատճառը, որ Աբգարի տպագրած եկեղեցական գրքերի մեջ պապական կղերի պահանջմամբ հոգևոր կաթոլիկության փոփոխություններ են եղել, որպիսի հանգամանքը պարզ է, որ Էջմիածնի մեջ խիստ դժգոհություն պիտի առաջ բերեր: Արդյո՞ք այդ էր պատճառը, թե այլ հանգամանք, հայտնի չէ, միայն տպարանը այնուհետև դադարում է բոլորովին գործելուց: Կարճ ժամանակից հետո Աբգարն էլ վախճանվում է**:

Զ

Հայաստանը յուր քաղաքական իշխանությունը կորցնելուց հետո դառնում է մի վայր, դեպի որը իրենց աչքերն են ուղղում Ասիո խորքերից դուրս եկած թուրք-թաթարական ցեղերը: Դրանք արևելքից արևմուտք արշավելուց և որևէ քաղաքակրթությունից զուրկ լինելով, պարզ է, որ բարգավաճ քաղաքներ, ավաններ, գյուղեր պետք է զոհ գնային նրանց ընչաքաղցության: Բավական է հիշել Չինգիզխանի, Լենգթեմուրի անունները հասկանալու համար, թե այդ ցեղերի սերունդները ինչ բարբարոսությունների էին ընդունակ: Արևելյան երկրների հետ Հայաստանն ևս արյունաքամ է լինում և ժողովուրդը հյուծվում է անընդհատ միմյանց հաջորդող հարստահարությանց տակ:

Հայաստանի ավերն ու կոտորածը շարունակվում է դեռ երկար տարիներ, իսկ ԺԵ և ԺԶ դարերից սկսած Հայաստանը դառնում է նաև օսմանցվոց և պարսից մեջ կռվախնձոր և կռվող կողմերից յուրաքանչյուրը չի հապալում հակառակորդից պակաս ավերել երկիրը և սրի անցկացնել հայ ժողովրդին: Բավական է կարդալ Առաքել վարդապետ Դավրիժեցու պատմությունը, որտեղ վառ գույներով նկարագրված է թշվառ հայրենիքի անպատմելի բարբարոսությունների ենթարկվիլը, որպեսզի պարզ լինի մայր երկրի դրությունը:

«...Եւ զայս ամենայն լսելով և գրելով մեր», գրում է Առաքել վարդապետը, «ճմլին սիրտք մեր և գալարին աղիք որովայնի մերոյ, և աչք մեր վտակս արտասուաց թորեալ իջուցանեն վասն եկելոց հասելոյ թշուառութեանս ժողովրդեանս մերոյ: Եւ ոչ բաւիմք աստանոր, թէ որո՞վ օրինակաւ՝ և կամ որո՞վ տարազու ողբս առեալ աշխարեսցուք ի վերայ բեկման ազգին և աշխարհին մերոյ...»:

ԺԷ դարի սկիզբը Հայաստանի համար ամենածանր ժամանակներից մեկն էր: Միմյանց հաջորդող պարսից և օսմանցվոց պատերազմները, սովը, չալալիների և Շահ-Աբասի արշավանքները, ժողովրդի վրա խիստ ծանր հարկեր դնելը,—այնպիսի մի վիճակ էին ստեղծել, ժողովրդին այնպիսի ծանր դրության մեջ դրել, որ ոչ ոք չէր համաձայնվում կաթողիկոս դառնալ: Հայրապետական գահի վերա բազմելը հոգևորականների կողմից մեծ զոհաբերություն և ազգասիրություն էր համարվում: Եղել է ժամանակ, երբ միաժամանակ երեք կաթողիկոս են եղել, բայց ոչ մեկը Էջմիածնում չի նստել. հարկերից ճնշված խույս են տվել ու ծածկվել:

Չնայած այսպիսի տաժանելի դրության, Էջմիածնի կաթողիկոսները իրենք մի բուն չունենալով, ուր իրենց գլուխը հանգիստ դնեին, այնուամենայ-

* «Բազմավէպ», 1865, հուլիս, Աղ. Երիցյան, Պատմ. տեսութ. հայ տպագրության, Ցրփիխիս, 1879, էջ 5:

** Աղեք. Երիցյան, անդ, էջ 5:



Մի էջ «Խորհրդատետր»-ից (1641 թ., Նոր Ջուղա)

ճիվ մտածում էին և հոգս տանում տպագրությունից օգտվելու, որ Եվրոպայում օրավուր առաջ էր գնում:

ԺԷ դարի սկզբին հայրապետական Աթոռ է բարձրանում Սրապիոն կաթողիկոսը, որ մի շատ գրասեր մարդ էր: Նրան շատ լավ հայտնի էր, թե ինչպիսի ծավալ էր ստանում կաթոլիկությունը Եվրոպայում, որ կարող էր նաև Ասիա մտնել: Հարկավոր էր միջոցներ գտնել հայ ժողովրդին վերահաս վտանգից ազատելու համար: Եվ նա հասկացավ, որ հայ ազգին կաթոլիկության ճիրաններն ընկնելուց փրկել կարելի է միայն այն միջոցով, ինչ միջոց որ եզվիտներն էին գործ դնում. այն է՝ ուսում և գրագիտություն տարածելով: Ուստի, Սրապիոն կաթողիկոսը շատ էր մտածում այդ ցավին մի դարման անելու համար:

Սակայն նա, յուր կարճատև կաթողիկոսության ընթացքում (1603—1605), ժամանակի ծանր պայմանների պատճառով, չկարողացավ տպագրական արվեստը հայերի մեջ մտցնել: Ուստի նա կտակում է յուր աշակերտ Գրիգոր Կեսարացուն յուր այդ փափագն իրագործելու: Վերջինիս էլ չի հաջողվում յուր ուսուցիչի կամքն ի կատար ածել և ինքն էլ յուր կողմից այդ կտակը հանձնարարում է Հովհաննես Անկյուրացուն, որ ծանոթ էր «ընդ ազգիս ֆռանկաց եթէ կարդալով և եթէ լեզուաւ»*:

Հովհաննեսը գնում է Հռոմ և չորս տարի չարչարվելով հայերեն տառեր է պատրաստել տալիս, և հայերեն ու լատիներեն երկիջյան մի **Պատարագամատոյց** է տպագրել տալիս: Ապա իրեն համար ձուլել է տալիս նաև միջակ և բոլորգիր տառեր ու անցնում է Վենետիկ: Անկյուրացու մեծ ցանկությունն էր **Աստվածաշունչ** գիրքը տպագրել, որը նորան չի հաջողվում, ուստի և անցնում է Վենետիկ: Այստեղ սակայն նա կարողանում է 1642 թվին միայն **Սաղմոս, Խորհրդատետր,** և Ծնորհալու **Յիսուս Որդին** տպագրել: Այնուհետև նորա անունը այլևս չի հիշվում: Վերջին գրքի մեջ տպագրողի հիշատակարանը կրում է «Ծանուցում պայծառ ընթերցողաց» անունը, և սկսվում է այսպես. «Փառք եռակի անբաժանելի և մի տէրութեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ... որ ետ կարողութիւն նուաստ և տառապեալ անձին իմոյ Յովհաննէս Անկիւրեցւոյ թարգմանչի որ մականուն ըստ հռոմայեցոց Միւանի Մօլինօ ասի, հասանիլ ի յաւարտ տպագրութեան արհեստիս, զոր **բազում ջանիւք և շատ նեղութեամբ տքնեալ և աշխատեալ** այս Ջ(6) ամ է զոր կախեալ կամ վասն տպագրութեան արհեստիս, ապաւինելով ի յոյսն ամենեցուն, ի Քրիստոս Աստուած... Եդի ի մտի զտպագրութեան արհեստն առ ի պայծառութիւն ազգիս Հայոց: Այլ և պատճառ աշխատանաց մերոց այս էր, զի յՈւրհայեցի **Սրապիոն կաթողիկոսն բազում փափաք ունէր վասն տպագրութեան արհեստիս,** և ոչ եղև հասու: Եւ ետ պատուէր աշակերտին իւրոյ Տէր Գրիգոր քաջ բաբունապետին Կեսարիոյ՝ լինի եթէ դու կարողանաս տպագրութեան արհեստին և նա ևս ոչ կարողացաւ: Իսկ նա ինձ մեղաւորիս և անարժանիս իբր հարկս ի վերայ եդեալ, պատուիրէր ինձ հանապազ, եթէ լինի դու կարողանաս. վասն զի իմ ծանօթութիւն կայր ընդ ազգիս ֆռանկաց, եթէ կարդալով և եթէ լեզուաւ. այսպէս յանձին կալեալ ջան եդի աղօթիւք նոցա...»**:

Այդ ժամանակ հայ գաղթականությունը Նոր Ջուղայում հիմնում է Ամենափրկչյան վանքը, որտեղ ձեռագրերի և գրքերի հարուստ մատենադարան կար: Այստեղ տպարանի կարիք է զգացվում: **Էջմիածնի միաբան Խաչատուր վարդապետը** այդ գործի սկիզբն է դնում: Նա նվիրակ էր գնացել Նոր Ջուղա և տեղի ժողովրդի խնդրանոք հանձն է առնում ս. Ամենափրկչյան վանքի առաջնորդության պաշտոնը 1620—1647 թթ.: Նա գիտուն էր և ազգասեր: Խաչատուրը աշակերտներ հավաքելով ոչ միայն նոցա կրթում է և վարժեցնում Հին և Նոր կտակարանի գիտությանը, այլև «շինեաց զտպարան՝ որ համարի առաջին տպարան ի մէջ ազգի հայոց»***: Ասիո մի խուլ անկյունում՝ Ասպահանում զանազան տառերի կաղապարներ էլ է պատրաստել տալիս, թեև շատ տձև և կոպիտ: Ապա յուր հիմնած տպարանում այդ տառերով նա տպագրել է տալիս 1642 թվին **Հարանց վարքը,** մանր տառերով, և գրով՝ **Ատենի ժամա-**

---

* Հ. Գ. Զարբհանալյան, Հայկական մատենագիտություն. Վենետիկ, 1888, էջ 457:

** Աղեք. Երիցյան, Պատմական տեսություն հայ տպագրության, Տփխիս, 1879, էջ 7—8:

*** Ցարութիւն Տէր Յովհաննեանց, Պատմութիւն Նոր Ջուղայու, որ յԱսպահան. հատ. Բ, Նոր Ջուղա, 1881, էջ 18:



Մի էջ «Ատենի ժամագիրք»-ից (1642 թ., Նոր Ջուղա)

գիրք, որին կցված էին **Սաղմոսը, Տօնացոյցը** և **Օրհնութեանց** քաղվածքը: Ասիո խորքում վառած այս լուսատու ջահը թեև ընդհատումներով, բայց յուր գոյությունը պահպանեց մասամբ մաքառելով նաև կաթոլիկ հոգևորականության դեմ:

Նոր Ջուղայի տպարանին ավելի զարկ տալու համար Խաչատուր վարդապետը դեռ 1639 թ. Եվրոպա է ուղարկում Հովհաննես վարդապետին առավել լավ ուսումնասիրելու և նոր տառեր պատրաստել տալու համար: Հովհաննես վարդապետը. մի քանի տարի շրջագայում է Եվրոպայում, վերջը գալիս

է Իտալիա և Հռոմում նոր տառեր պատրաստել տալիս զանազան մեծությամբ, բազմաթիվ տպարանական զարդեր, նույնիսկ նոտաներ երգերի և շարականների համար: Նա կարողանում է գեղեցիկ ու վայելուչ ձև տալ հայերեն տառերին: Սակայն, չկարողանալով ոչ մի գիրք տպագրել, անցնում է Լիվոռնո, որտեղ 1643-ին տպագրում է **Սաղմոսը** յուր նոր տառերով և այդ **տպարանը վերցնելով** վերադառնում է Նոր Ջուղա:

Այստեղ նա հուսախաբ է լինում, որովհետև Խաչատուր վարդապետն արդեն վախճանված է լինում, իսկ տգետ միաբաններն արգելք են հանդիսանում տպարանի հաստատելուն: Այնուամենայնիվ, Հովհաննեսը մեծամեծ արգելքների հաղթելով՝ կարողանում է տպագրել **Պարզատումար Ազարիայի** 1647 թվին, նաև **Լիակատար պատմութիւն** անունով մի գիրք, և ձեռք է առնում **Աստվածաշնչի** տպագրությունը, որը սակայն ավարտել չի կարողանում*:

Այսպիսով մի ամբողջ դար շարունակ հայ սրտացավ հոգևորականի և աշխարհականի բաղձանքն է լինում Աստվածաշունչը տպագրված տեսնել, սակայն այդ չի հաջողվում:

Է

Փիլիպպոս Աղբակեցի կաթողիկոսը 1649 թվին Էջմիածնում մի վարժարան է բաց անում, որի նպատակն էր կաթոլիկության ներկայացուցիչ Կղեմես Գալանոսի և մյուս քարոզիչների պրոպագանդայի առաջն առնելու համար մարդիկ պատրաստել: Փիլիպպոսի հաջորդ ուսումնասեր Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսի (1655—1680) առաջին ջանքն է լինում Էջմիածնում ևս տպարան բանալու մասին հոգալ: Նա տեսնելով Ջուղայի տպարանի տառերի խորթությունը, այլ չհավանելով Հովհաննես Անկյուրացու պատրաստել տված գրերը, կամեցավ նոր գրեր հնարել տալ, ուստի և մի հարմար մարդ էր փնտրում, այդ նպատակով Եվրոպա ուղարկելու համար: Այդ ժամանակ Էջմիածնում էր Փիլիպպոս կաթողիկոսի քարտուղար Մատթեոս դպիր Ծարեցին, որին և 1656 թվին Եվրոպա է ուղարկում կաթողիկոսը տպագրական արվեստն ավելի լավ ուսումնասիրելու համար:

Մատթեոսը 1656 թվականին Զմյուռնիայից նավապարհ է ընկնում դեպի Եվրոպա և քառասուն օր ծովով նավապարհ անցնելուց հետո հասնում է «ի գեղազարդ քաղաքն և ի նաւահանգիստն ի Վենետիկ»: Այստեղ նա շրջելով բոլոր տպարանները և ցանկացածը չգտնելով, ստիպված է լինում գնալ Հռոմ: Մատթեոսը այստեղ էլ չի կարողանում յուր ցանկացած նարտար արվեստագետ անձանց գտնել, մանավանդ հալածվելով պապական կրոնական մոլեռանդությունից—«Բարեատեացք և հակառակասէրք», ասում է նա, «գըրգռեցին զմեծամեծս և զժողովս առ ի խափանել զայս գործ» և մինչև իսկ հրաման են հանել տալիս, թե «ոչ ոք յարհեստաւորաց իշխեսցէ հանել զայս արհեստ. և տալ ի ձեռս հայոց և որք ըստ գտնեալ արասցէն զայս գործ ծածուկ և կամ յայտնի, պատիժ սաստիկ կրելոց են ի մէնջ, և կամէին անհացուցանել»**:

Այդ պատճառով Ծարեցին անցնում է Հոլանդիայի Ամստերդամ քաղաքը: Ամստերդամում հայերը մի փոքրիկ առևտրական գաղութ էին հիմնել: Հոլանդիան այն ժամանակ ազատվել էր պապական բռնակալության ձեռքից և բողոքական ազատ հանրապետություն կազմել:

Այստեղ արագությամբ և մեծ քայլերով առաջ էր գնում տպագրական գոր-

---

* «Ազգասէր», Կալկաթա, 1845, № 2, 4:
** «Բազմավէպ», 1896, Բ:

ծը: Այդ ժամանակ Հոլանդիայում լավ հայտնի էր Քրիստափոր Վան-Դիկը, որն ուներ թե՛ տպարան և թե՛ տառերի ձուլարան: Մատթեոս Ծարեցին սորան է դիմում և 1658 թ. նոյեմբերի 27-ին պայման է կապում երեք տեսակ տառ պատրաստելու, Աստվածաշունչ տպելու համար: «Չորս տարի և նոյնչափ ամիս աշխատեցինք և շատ նեղութիւնք քաշեցինք», ասում է նա, մանավանդ, «մերային զազանց սուտաձև կարգաւորաց և յաշխարհականաց թէ՛ ի Վենետիկ և թէ՛ աստ ի Ամստերդամ, որք փոխանակ օժանդակութեանն, զոր պարտն էին՝ դիմաքանեալ հակառակ էին մշտաբար»:

Այս մարդիկ իրենց թե՛ խոսքով և թե՛ գործով կամենում էին Ծարեցու ձեռնարկություններն արգելել և եթե օտար բարեպաշտ անձինք օգնել էին կամենում, «զայն ևս յուսահատեցուցանէին և ապաշաւել տային բարեգործութեանն»: Սակայն, Մատթեոս Ծարեցին առանց հուսահատվելու, բոլոր դժվարություններին հաղթում է և 1660 թվին ստանալով տառերի մի մասը, սկսում է հրատարակել Ներսես Շնորհալու **Յիսուս Որդին:** Բայց դեռ հրատարակությունը չվերջացած Ծարեցին ծանր կերպով հիվանդանում է: Ուստի և նա օր առաջ մտածում է յուր տպարանի վիճակն ապահովելու մասին:

Այն ժամանակ Ամստերդամում էր գտնվում վանառականական գործերով Երևանցի Ոսկան վարդապետի եղբայր Ավետիսը: Ծարեցին կանչում է սորան իրեն մոտ և նորան ընկերացնում է տպագրական գործին այն պայմանով, որ պարտքը և թե վանառումից գոյացած օգուտը իրենց մեջ կիսեն: Ավետիսը շահադիտական նպատակ չունենալով՝ չի ընդունում Ծարեցու պայմանը, այլ յուր կողմից առաջարկում է տպարանը նվիրել **ս. Էջմիածնին և ս. Սարգսի Զորավարին,** որի համար նա պատրաստ էր թե՛ դրամով և աշխատությամբ օգնելու: Մատթեոսը համաձայնվում է և դեռևս յուր կենդանության ժամանակ գրում է գրքի վերջը դրվելիք հիշատակարանը, որը լրացնում է Մատթեոսի մահից հետո Ավետիսը. «Ես,—ասում է նա,—երիւանեցի Ղըլիջենցն Ոսկան վարդապետի եղբայր Աւետիսս, որ յընկեր ի նորա դրամով, այլ օգնութեամբ, Աստուած ինչ (ինչ) որ վաստակ տայ մեր մէջն, վաստակն կիսոյ լինի, որ ծաս որ մեռաս, ես իբրև որբ տարակուսեալ և պարապ մընաձի ես և սահմանք և գործն և մշակն. ամիս ժամանակ անցաւ. սկսան նաւերն գնալ ի դէմ արևելս ի քաղաքն Զըմրոնայ աթոռն սուրբ Պողիկարպոսի, որ է յեօթանասնիցն. անհարութեանն մնացեալ, ԺԴ (14) տետրն տպագրեցի վախելով այսպէս սրբագրեցի. օրինակ ետի ի մի կողմ՝ տպայգրածն մի կողմ մին կու նայի օրինակն՝ մի ի տպայգրածն. յորժամ որ սղալ լինէր, կու մեկնի այսպէս սրբագրեցի. մընացիալ ԺԴ (14) տետրն. ապայ ուսայ ըզսրբագրեալն որ տուրին է. թիւն ՌՃԺ (1661) մարտ ամսին. ԻԵ (25) սուրբ Աստուածածին միչնորդ ունելով»*:

Ավետիսը այս հիշատակարանը գրելով, անկեղծությամբ խոստովանում է, որ յուր անունը դնելու կարիք չկար, բայց ստիպված դրեց հիշատակարանի մեջ, որովհետև մեծ աշխատանք ուներ գործի վերա թե՛ դրամով և թե՛ ուրիշ օգնությամբ, որովհետև «ուխտադիր եղեր եմ, որ մինչ ի մահս պիտի որ աշխատիմ, վասն սուրբ Էջմիածնուն...»: Իսկ 1661 թվին տպած **Սաղմոսարանի** հիշատակարանի մեջ Ավետիսի վերոհիշյալ ասածները ամբողջանում են: **Սաղմոսարանի** հառաջաբանի գրողն է Կարապետ վարդապետ Ադրիանացին, որի մեջ հիշում է Փիլիպպոս կաթողիկոսի նոտար Մատթեոս Ծարեցուն, «Որ բազում ջանիւք և երկամբք քանդակել ետ և նորակերտեաց զազնիւ և զպատուական գիրս այս, հրամանաւ և կամօք երիցս երանեալ կաթուղիկոսին Յա-

* Լեո, Հայկական տպագրություն, հտ. Ա. Թիֆլիս, 1901, էջ 150:

կոբայ»[7]: Այս տառերի օրինակն ու ձևը Մովսես վարդապետն է տալիս, իսկ հիշատակարանի մեջ հիշում է Ղլիջենց Ավետիսին. «Որովհետև,—ասում է նա,—ինքն եղաւ պատճառ, որ այս ազնուակերտ և ըղձալի տպագրարանս ընծայուի Էջմիածնի և սրբոյն Սարգսի Ցուշոյ վանից: Զի Ծարեցին վերջին հիւանդութեան ժամանակ կոչել տուաւ զԱւետիս, և փոխ դրամ կուզէր իրմէ եօթն հարիւր հնգետասան մառչիլ, որպէս զի պարտապանաց հատուցանէ. այն ստակով, կըսէր, երկու հազար **Սաղմոսարան** և հազար երկու հարիւր **Յիսուս Որդի** կը տպագրենք, ու անոնց վաճառմանէն եղած շահը երկուքի կը բաժնեմք, մէկն ինձ և միւսն քեզ: Իսկ եթէ մեռնիմ, քոյ տեսչութեան ներքև կըլլայ տպարանը ու կը վճարես պարտքս և ինձի տուածդ շահովը»: Ավետիս այս առաջարկության հանձնառություն չի ցուցնում: «Այլ, եթէ տպարանդ կ'ընծայես, ըսաւ, Էջմիածնի և սրբոյն Սարգսի, հետդ ընկեր կ'ըլլամ, ու ստակը տալով քեզ, ցորչափ կենդանի եմ, կ'աշխատիմ ի տպարանի. և դրամիս արդիւնքը վերոյիշեալ սրբոյն անունն կրող վանաց կը նուիրեմ. իսկ մահուանէս ետքը՝ բովանդակը: Հաւանեցաւ Մատթէոս և կտակաւ որոշեց որ իր մահուանէն ու երկուքին ալ պարտուց հատուցմանէն ետքը տպագրատունն յանձնուի Էջմիածնի և սրբոյն Սարգսի Մենաստանաց»*:

Մատթեոսի մահից հետո Ավետիսը վճարում է նորա թողած պարտքերը, ստիպում է Վան-Դիկին, որ տառերի փորագրությունը վերջացնի. ինքը հայերենի մեջ թույլ լինելով մի կերպ սրբագրում է, և **Յիսուս Որդի** գրքի տպագրությունը վերջացնում է և ապա հետևյալ հիշատակարանն է գրում.

«Վասն որոյ աշխատանք ունիմ ի վերա այս գործիս թէ՛ դրամով և թէ՛ այլ օգնութեամբ. և թէ ուխտադիր եղեր եմ որ մինչ ի մահս պիտի որ աշխատիմ վասն սուրբ Էջմիածնուն... Մատթէոսն որ մեռաւ թէ որ ես չէի՝, ո՞վ պիտի տիրէր ի վերայ քէրխանային. հազար մառչիլ չոր պարտք քէրխանային, որ հինգ հարիւր մառչիլ չէր արժէր...»[8]:

Ավետիսը մանրամասն նամակ է գրում տպարանի մասին նաև յուր եղբայր Ոսկան վարդապետին, որ Ուշի ս. Սարգիս վանքի վանահայրն էր: Ոսկանը նամակը տանում է և կարդում Հակոբ կաթողիկոսին, որը ուրախանալով՝ հրամայում է Ոսկանին գնալ Հոլանդիա և տեր կանգնելով տպարանին՝ ձեռնարկել **Աստվածաշնչի** տպագրությանը. բայց որովհետև Ոսկանը դեռևս գրաղված էր, ուղարկում է յուր աշակերտ Կարապետ վարդապետ Ադրիանացուն՝ եղբոր մոտ, որպեսզի սա գործն առաջ տանի մինչև յուր գնալը:

Ավետիսը տպարանը հանձնում է Կարապետ վարդապետին, որի հետ և հավասար ջանքով ու աշխատանքով սկսած տպագրությունները վերջացնում են և ձեռնարկում մեծ **Ժամագրքի** տպագրության: Բայց, ինչպես երևում է, Ավետիսին յուր առևտրական գործերը շատ էին խանգարում, ուստի և նա գրում է Հակոբ կաթողիկոսին և խնդրում է մի հասկացող մարդ հանձնարարել, որին կարողանա տպարանը հանձնել:

Ամստերդամի նման կենտրոն տեղում և վաճառաշահ քաղաքում տպարան ունենալը Էջմիածնի համար մեծ նշանակություն ուներ: Ուստի և Հակոբ Դ. կաթողիկոսը հովանավոր հանդիսանալով, արտոնում է Երևանցի Ոսկան վարդապետին 1662 թվին գնալ Հոլանդիա և տպարանի կառավարությունը յուր ձեռքն առնել:

(Շարունակելի)

* Հ. Գ. Զարբհանալյան, Պատմություն հայկական տպագրության, Վենետիկ, 1895, էջ 100—101: